

Ա.

ԵՐԱՆԵՆՈՒՆԸ ԳԻՒԳՈՐԻ ՍՔԱՆՁԵԼԱԳՈՐԾԻ Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՆԱԿՆ ՄԵՐՈՑ ՅԵՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Առաջինը երուսաղէմի զի հասեալ է լոյս քո: Ձառ ի մեծէն Եսայեայ զբարձրագոյն և բոլոր հոգեւոր աւետարանութիւն քեզի եկեղեցի հեթանոսաց, մատուցանեմ ընծայարեութիւն՝ զմարգարեական աստուածաձայնութիւն, զհնուածեալ ժամանակաւ զտեսութիւնն յայսմ աւուր կատարեալ: Աոյս զերահրաշխեալ, նստելով ի վերայ հովանացեալ կափարիչ զբան զերեզմանին, զաւետիս լուսոյ հնչեցուցանէր՝ զճաղատան արեգականն արդարութեան աւետարանելով, զերեքօրեայ պատեալն ընդ մառախղաւ: Ի զժողոջ ի վեր զեկեղեցութիւն աւետարանեաց առ Մարիամ՝ սկզբնաւորեալ զուրախութեան զձայնն: Զի զոր օրինակ դառաջին կնոջն որով մահ թագաւորեալ առհասարակ եկու զմարգարայինս զայս բնութիւն խորդախանօք օձին որ մատուցանէր զպատճառս կորստեան իրատուն՝ յափըշտակելով զմիտն առ ճաշակումն կորստեան պողոյն, ուստի յափշտակումն ի կենաց փայտէն եղեալ և մերժումն յեղեմական զբախտէն՝ նախկին լինել կորստական աշխարհի, աստանօր հրեշտակական երեւումն կնոջն զհակառակն նմին գործէր՝ փոխանակ խարէութեան ճշմարտութիւն: Ասան զի անդ օձն մերձեալ զկերպարանս պատրուակին ի նա ձգելով զպատճառս, իսկ աստ զհրեշտակական կերպարանն ամբողջ պահելով զճառագայթն փայլեցուցանէր: Երբեք ի սքանչելակերպ պայծառութեանցն պահապանքն եղեն իրրե զմեռեալս: Եւ զինչ բարրատ աւետարանութեան Փրկչին յարութեանն, զերեւոյց արձակումն՝ ի ծառայութեանէ ազատութիւն, ի ըստուերս մահու նստելոց կենդանութիւն, տրամելոց կատարեալ ցնծութիւն: Եւ քանզի զգութ աստուածային սիրոյն հաւատով յինքեան ունէին երանելի կանայքն այնքորիկ՝ հուպ առ խաչին կալով և ստեպ առ գերեզմանին գեգերելով, հսկմամբ զամենայն գիշերն ոչ զանգիտելով յահէն հրէից, աշխատութեամբ տաժանեալք՝ աշխատութեամբ և հառաչանօք առին զհատուցումն վաղվաղակի: Ո՞վ արդեօք էին կանայքն: Մատթէոս զՄագդաղենացին ասէ եկեալ ընդ երեկոյս շարժուն, յորում լուսանայր միաշարժին, եւ յիրաւի զի նորա իսկ էր ջերմեռանդն սիրոյ օրինակի զոր յաճախ ունէր առ Տէրն, որ ոչ մեկնէր ի նմանէ յառաջ քան զխաչն:

և ոչ մինչ ընդ նմին բեկեղեակն էր, նաև յետ մահուն և գերեզմանին նոյնգունակ. քանզի բուժելոյ ատիցն ի նմանէ, յորում ըմբռնեալն էր եօթն շարութեանէ այսոյն՝ զորոյն յինքն բնակեցոյց զՔրիստոս, յետ զժնեայ և վտանգաւոր ատիցն զկենդանական և զմարգարեան առողջութիւնն, ըստ եօթն պղծալից շարութեան զեօթնարփի շնորհս հոգեւոր սրբոյ ընկալեալ՝ ելից զտուն իւր աստուածային անուշահոտ իւղովն: Ասան այնորիկ յեղեալ զեղեալ ի սէր Փրկչին, բարձեալ զխաչ մարմնոյն և հետեւեալ զկնի խաչելոյն՝ մինչև եզրիտ զտենչալին, Արագեաց քան զամենեան և առ զփափաղելին, յորդառատ էյեղ զարտասուն և նոյն աչօք ետես զյարութիւնն: Քանզի ասէ. Իրրե զնացին պատմել աշակերտացն, պատահեաց նոցա Յիսուս և ասէ. ո՞ղջ էք: Յայանեալ աւետիքն ծանուցաւ ցնծութիւն, վշտաղբեաց կանայքն զուրախութիւն զզեցան, կալան զտիցն և երկիրպագին նմա: Առաքեալս առաքելոցն գործէ, աւետարանիչս աւետարանչացն, քարոզս քարոզչացն, և հրաւիրեալ սոբօք ի լեռն Պալիլեայ՝ յառաջագոյն ժամագրեալ տեղին, Այլ ինդրելի է վասն միւսոյն Մարիամու, թէ զուժմէ՞ ասիցէ: Ոմանք զմայր Տեառն ասացին, իսկ այլք զքոյր մօր նորա՝ զՄարիամ Աղէովպայ. այլ յայտնագոյն աւետարանիչքն զՄարիամ՝ Մագդաղենացին յանուանէ և ի տեղւոյն ցուցանեն, վասն օտար գոյ յազգակցութեանէ և ի սքանչելի փրկութեանէ և յաճախ սիրոյն. և իրրե զնշանաւոր ոմն և ճշմարիտ վկայ Քրիստոսի և յարութեանն՝ յիշատակ է, Իսկ միւսոյն ոչ նոյնգունակ յայտնի ցուցանէ ո՞վ որ իցէ ի Մարիամնցն, և յայլում տեղւոյ զնոյն խորհրդածէ, Քանզի թուեալ զըստ մարմնոյ նախահարսն Քրիստոսի՝ ոչ զոր յառաքիներացն և ի բարետոհմիկ կանանցն յիշատակեալ ցուցանէ, որպէս զՍարայ և զՌեբեկայ և զնմանիս նոցա. քանզի ասէ թէ Արրահամ ծնաւ զԻսահակ, և ոչ ասէ թէ ի Սարայէ, Իսկ յորժամ զյոռին և զայլազգեացն զկարգ մուծանէ, անգանօր զԹամար և զՌաբար և զՀուլի և զԲերսարէէ յիշատակէ, թողեալ զայլսն: Այլ մի նոյնգունակ և զուրբսն զայնտիկ վարկանիցիս, որք զողջոյն տիեզերական ինդութեամբ ի հրեշտակէն ընկալեալ և նախկին տեսութեան յարուցելոյն արժանի լեալ, նախկին առաքելոցն աւետիս սկզբնաւորելով հնչեցուցանելով ընդ ծագս տիեզերաց զհրաշալի փրկութիւն սուրբ և փառաւորեալ յարութեանն:

Աւստի և մեք զառ ի նոցանէն առեալ զվայել-

չական երգարանութիւնս ի վերուստ ի վեր Տրատարակելով զպտուղ շրթանց մերոց ընծայեցուցուք աստուածայնոյս այսմիկ և թագաւորականի աւուրս պատարագ բնաւորական առաւել քան զողջակէզս ի հոտ անուշից։ Աւրախ լիցին երկինք և բերկրեացին տիեզերք ամենայն, զի այսօր բարձան տրտմութեանցն տեսակք և հաստատեցաւ անշարժ խաղաղութիւն ի ձեռն արեանն Քրիստոսի և վերացաւ կրճիմն, որ կայր ի միջի, նորին յարութեամբն, Աւրախ լեր, նախաստեղծդ Ագամ, վասն զի նախայախտեանն Աստուած առեալ զքո բնութիւն և զկերպ, նմանեան ներգործեաց զփրկութիւն՝ պարտեցելուժն փայտիւն և պտղովն եղև պտուղ փայտ խաչին՝ առ կենաց փայտն վերստին հուպ կացուցանելով, յորմէ արտաքսեալ մերժեցար, Աւրախ լերուք ըստ մարմնոյ, նահապետք բանին, մարգարէական և թագաւորական զարդարեալ շնորհօք, զի այսօր Միածին Բանն Աստուած յապականութենէ զձեզ վերստին նորոգէ ի կեանս և յանապականութիւն, Աւրախ լերուք, երջանիկ ընտրելոց մետասանից հոյք, գերագոյն և պատուական ակունք զարդարեալ վակասիւն, ոչ որով շքեղազարդէր Ահարովն ի Խորանն վկայութեան, այլ որով զարգափայլի կաթուղիկէ եկեղեցի քահանայապետիւն Քրիստոսի՝ յարուցելոյն ի մեռելոց, Աւրախ լեր, մեծք ի ծնունդս կանանց, կարապետդ արեգականն արգարութեան Յովհաննէս, զի առ հոգին ի դժոխս քարոզելով հաւատարմագոյն զխոստումն ցուցեր, որոց կարապետեցեր կապելոցն արձակումն՝ Քրիստոսի հետևողութեամբն, որ եսպան զգորութիւն կարծեցելոյ իշխանին, Աւրախ լերուք, մարտիրոսաց ժողովք, ընդ Քրիստոսի խաչեալք և ընդ նմին բեւեռեալք, զտարացոյց զօրութիւնն ի ձեզ տպաւորելով, զոր զնկալեալ ի ձեռն աստուածայնոց բաղկացն ընծայ հօր մատուցանելով թէ ահաւասիկ ես և մանկունք իմ, Աւրախ լերուք, հայրապետաց և վարդապետացն վսեմական յարգարեալ հիմունք, եկեղեցւոյ հաստատութիւնք, խորիսխ հաւատոյ ծաղկազարդք Քրիստոսի հաւատացելոց, զի որ մարգարէիւք սկզբնաւորեալ հիմնացաւ, ձեռք և զարգափայլեալ պայծառացաւ, ունելով ի զլուխ զթագն պարծանաց՝ զպատուական սուրբ խաչն, յոր մտրգարիտն մեծագին ճաճանչաւոր լուսով ի նմա կառուցեալ, յանդերձային խորոցն արտաքս եկեալ այսր՝ առ հասարակ զամենեւնեան յառազաստն վերաբերելով, Աւրախ լեր, եկեղեցի հեթանոսաց, որ ոչ ձնանէիր ըստ Եսայեայ մարգարէութեանն, զի այսօր բացաւ որովայն ամլութեան քո աւազանաւն մարբութեան, որ բազմացուցանէ զորդի սկիզկիդ լինել ժառանգ Աստուծոյ և ժառանգակիր Քրիստո-

սի և հաղորդք կենացն անվախձանից, Քահանայքդ զգեցարուք զարդարութիւն, պատուելով զՔրիստոս պայծառագոյն լերուք քան զսերովբէսն, զորմէ ունելիօքն առեալ ի սեղանոյն զկայծակնատեսիլ հուրն մերձեցոյց ի շրթունս մարգարէին, Գուք զնոյն համարձակապէս տեսանելով և ձեռամբ բաշխելով՝ ոչ զարհուրէք, այլ բերկրալից ուրախութեամբ հոգով և մարմնով Քրիստոսի պատուոյն հանդիպեալք, զքահանայապետական ժառանգեցէք զաթոռ, Պարտ է յամենայնի անարադք հանդիպել մեծի պատեքիս, զի լիցուք արժանի փառաւորել զՔրիստոս այժմ և յաւիտեանս։

ԵՐԱՆԵՆԻՒՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՔԱՆՁԵԼԱԳՈՐԾԻ:

Ի՛նչ աստուած և եղև մարգ՝ ոչ հեռացեալ յաստուածութենէն, այլ որ էրն նոյն եկաց՝ անվախօրիսելի և անայլայլելի. ինքն յինքեան, և ոչ ինքն ի մարմնի, այլ մարմինն յաստուածումն. Եւ աստուած մարմնացեալ, ոչ մասամբ, այլ բոլորովին, ոչ պակասութեամբ, այլ լիութեամբ, ոչ երկուութիւն, այլ միութիւն՝ անբարձանելի, ի կուսէն յայտնեալ, մկրտեալ, փորձեալ, մասնեալ, չարչարեալ, ի փայտի վերայ՝ խաչեալ, ծածկեալ ի վիմի, եւ աւարեայ ի դժոխոց ի վեր եկեալ աստուածարար յարութեամբ, ի յերկինս ի վեր երթեալ, Եւ զայ միւսանգամ թագաւորեալ յաւիտեանս. ամէն։

Խոստովանութիւն նսգից թուով ասացեալ Սրբոյն Գրեգորի Սքանչնազործի:

Ար որ ասէ, թէ եղելութեամբ յայտնեալ զՔրիստոս աշխարհի, և ոչ խոստովանի զնա ի մարմնի եկեալ, որպէս և գրեալ է. նղովեալ եղիցի։

Ար որ անանձն կամ անիմաստ զմարմինն Քրիստոսի ասիցէ, և ոչ խոստովանի կատարեալ ըստ ամենայն զմի և զնոյն, որպէս և գրեալ է՝ նղով։

Ար որ ասէ մասն մարմնոյ առեալ զՔրիստոս, և ոչ խոստովանի զնա ամենայն նմանութեամբ բաց ի մեղաց, որպէս և գրեալ է. նղով։

Ար որ ասէ յեղեղու կամ այլայլեալ զՔրիստոս և ոչ խոստովանի զնա անյեղլի, հոգւով և անապական մարմնով, որպէս և գրեալ է. նղով։

Ար որ ասէ սոսկ մարգ զՔրիստոս բնապէս և զԱստուած Բանն բաժանէ, և ոչ խոստովանի մի Տէր Յիսուս Քրիստոս, որպէս և գրեալ է. նղովեալ եղիցի։

Մի օր. ի վերայ փայտի. 1. յարութեամբն. 2. թագաւորնէ:

Բ.

ՍՐԲՈՅՆ ԹԷՆՎԳՈՐՈՍԻ ԾՆՂՆԳԻԵԱՆՆ ԵՒ ՍՆՂՆԻԵԱՆՆ ԵՒ ՎԱՐՈՒՅ ՆՈՐԱ:¹

Ի ժամանակին յորում Մակեդոնացին Աղէքսանդրոս Փիլիպեանն կոչեցեալ: բազմաբիւրաւ բնասուածութեանն՝ տիեզերակալեաց: Ամասիաոն եղբայր Եբտառեայ: Տար Աղէքսանդրի: հասուած եղեալ յԵգիպտոսէ: ել ի Մէջերկրեայ: Գամրական Պոնտոսի: առ Երկրորդն կոչեցեալ Հայովք: առ որով հասի: Գայլ գետ ընդ մէջ քարալեւրամբն՝ անցանելով յանդգնագոյնս: և այնպէս իջանէ: ի Պոնտոս մոլեկան պնդութեամբ ի Սկիւռոնն՝ գաշտ² անտառախիտ ծովեզերին: Առ Որէ՝ գետեզերքն ժամանեալ ի տեղին որ կոչի Մարմախտովն:՝ սկիզբն առեալ ի Պոնտոսէ: ի մէջ քարալեւրանցն՝ գաղարեալ: ազգառնելով Աղէքսանդրի: հրաման առնու բնակիլ ի նմին տեղոջ: Զոր քաղաք շինեալ իւրովք ծառաշիւք և ժողովրդովք:

Իսկ յիտ բազում ժամանակաց Միհրդատ քեռայր Տիգրանայ Հայոց արքային՝ կողմնպետ³ գոլով աներոյ իւրոյ՝ ի Միժաք⁴ քաղաքէ: որ այժմ կոչի Կեսարիայ: գայ ունի զԱմասիայ ի Հայս գրաւելով⁵ տիեզերասահմանակալ⁶ քաղաք յարգարեաց: ընդարձակագոյնս պարսպեալ առ ի կատար⁷ լեւրանցն երկոցունց կողմանց գետոյն առ ստորոտով քարալեւնակին: Եւ նա⁸ ապառաժաւք մեծամեծ հաստապիղ⁹ կանգնեալ վիմաւք: և ի վերայ զարքունիսն կանգնեալ: Եւ յարեգակնային զիմի անձաւին շիրիմս քարակուխ և ճանապարհս¹⁰ և տուընդս¹¹ գանձուց յաւրինեալ սրբածոյս: համանման ձեռակերտացն՝ Շամիրամայ որ ի Վան: և Խազգաթգեփայ: Զորս լցեալ գանձիւք տիրանայ՝ ոչ սակաւ ամս մինչև ի գայն Պոմպէի: Ընդ որ¹² մարտուցեալ և պարտեալ Միհրդատ և անկեալ ի Պոնտոս: մեռանի ի Սինոպ: Իսկ Պոմպէի առեալ զգանձըն յԱմասիայէ և զյոլովս ի բնակչացն փոխեալ: շինէ¹³ քաղաք: յիւր անուն կոչեցեալ Պոմպիլուպալիս:¹⁴

Բոյց զԱմասիա կալեալ ի նախագահութեան: զԵղենոս Պոնտոս¹⁵ նետուպալիս¹⁶ արարեալ: լի ա մենայն չարաւք և պաշտամամբք սատանային: մինչև ի նոր քարոզութիւն առաքելոցն: յորում¹⁷ բազումք հաւատային: յորժամ եհաս յԱմասիա¹⁸ սուրբ առաքեալն Անդրէաս: և զՓիղեմէոս¹⁹ ձեռնադրեալ եպիսկոպոս: թողու անդ փոխանակ իւր: Եւ ինքն իջանէ²⁰ ի Սինոպ: ուր բազում սքանչեւագործութիւնք լեալ պատմին: Եւ Փեղեմէոս ձեռնադրէ զերանելին Գրիգոր Աբանչիւղագործ եպիսկոպոս Կեսարու:

Եւ այնպիսի ինչ կարգաւք վարեցան երբեմն

յայտնի: և երբեմն ի ծածուկ: մինչև ի ժամանակս հալածանացն: յորում բազումք վկայեցին: Եւ այլ բազմութիւն հաւատացեցոց դաւղեալ սարսեցին: անյայտարար ունելով զհաւատսն: զոր ոչ կարէին գիտել գատաւորքն: այլ և զոր գիտէին: չգիտացեալ առնէին: Քանզի հրաման ընկալեալ ի թագաւորացն մի յուզել²¹ զայնոսիկ: որք թագաւորար ունին զհաւատսն: այլ զայնոսիկ: որք քաջասիրտքն էին և համարձակամարտք և յայտնի արհամարհէին զհրաման թագաւորացն և զպաշտամունս զիցն:

Ընդ այն ժամանակս երանելին Թէոփորոս²² ծնեալ լինէր ի բրիտտովնեայ²³ ծնաւոց: ի գիւղն Սաբորէ: որ վեց մոլն աւելի կամ պակաս հեռի էր ի Վեախս քաղաքէ Երկրորդ Հայոց:

Եւ որպէս ասեն յաւանդական գիրս պատմութեանցն: եթէ²⁴ մաւր նորա փախճանեալ: տղայ զնա թողու հաւրն սնուցանելով: Եւ նորա խարչեալ հատ: և հատաջրովն սնուցանէր զնա:

Եւ յարունս հասեալ սքանչելի վարուք²⁵ մանկութեան սուրբ: պարկեշտ յամենայնի: Որ զնոյն հատ սիրեալ: ոչինչ աւելի ճաշակէր:

Եւ այնպէս հասանէր յաստիս²⁶ հասակի երիտասարդութեան: կատարեալ մուրուաւք խորագունիւք: կարծ հերովք: և գանգրովք: թուխ գոլով: ահաւոր տեսեամբ: հռչակեալ արութեամբ: զոր տեսեալ զարմանալի: կամեցան զինուորել ի դուռն արքունի:

Այդ նա ոչ առնոյր յանձն: ասելով Ես զինուորեալ եմ երկնաւոր թագաւորին Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի Որդոյն Աստուծոյ: Զոր իրբե ընդ առ համարի հարեալ: ի բաց թողեալ: յուսային իւրովի գալ յուղղութիւն: գիտելով և զյանկարծակի պնդութիւնն բերել և զհակառակութիւնն ի վնաս ինքեանց:²⁷

Ընդ այն ժամանակս լինէր երանելոյն Թէոփորոսի ընդ պուսաստինս²⁸ ընդ Եւսեբիա կնոջ այրոյ անցանել առ ի պէտս ինչ իւրոյ գործոյ: Եւ ուժգին եղեալ տաւթոյն: խորհեցաւ հանգչել ի մարգճակին պուսաստին Եւսեբեայ: Եւ կոչէր Ահոտայ: Եւ կապեալ զձին: անկաւ ընդ հովանեաւ անկոյն: Եւ տեսեալ Եւսեբեայ: ի տնակէն իւրմէ ի սքահէն կարկառեալ զձեռնն աղաղակեաց առ նա և ասէ: «այ հեծեալ այ հեծեալ մի դադարեր յայդմ տեղոջ: զի հուպէ որք վիշապին հղաւրի: և զայսու ժամու ելանէ և շրջի ի մարգճակիդ: գուցէ վնասիս դու և երիվարդ: այլ յարուցեալ եկ ի տնիկս իմ: որպէս զի լուացեալ զոտս քո և հաց ճաշակեալ: հանգիցես ի միջարէիս: և հովուն անկելոյ երթիցես զճանապարհս քո:»

Պատասխանի ասէր երանելին Թէոփորոս և ասէ: «Ես յուսալով յաւանդականութիւնն Քրիստոսի Աստուծոյն իմոյ: աներևոյթ վիշապէն ոչ երկնչիմ:

Թնդ թէ յերեւելի անձէս Ելցէ ըստ բանի քում
և սատակեցից զնա անուամբն Քրիստոսիս:

Իսկ բարեպաշտն Եւսեբիս իբրև լուա թէ ըզ-
Քրիստոս անուանեաց և գիտացեալ թէ հաւատա-
կից իբր է ի խնդութենէն իբրովի ընթացեալ ընդ
առաջ նորա և բուռն հարեալ աղաչէր զնա զնալ
անտիս Եւ երթայր ընդ նմա ի տնիկն իբր Եւ մինչ-
գեռ նա խաւսէր ընդ նմա եղև շարժիւն յոյժ
գալով վիշապին: Զոր փութանակի զգացեալ ե-
րանելոյն Եւսեբեայ ճիշ բարձեալ մեծաձայն:

Եւ վիշապն քաջալանջ և մեծապարանոց ել-
եալ յարձակեցաւ ի վերայ երկվարին ահագին և
անզգամ շնչամար յոյժ:

Յայնժամ երանելին Թէովդորոս կիցեալ զին-
քըն ամենայաղթ նշանաւ խաչին Քրիստոսի հարկա-
նէ նիզակաւ պղուխ վիշապին և շեշտակի ձեղքեալ
առժամայն սասակէր զվիշապն որոյ տապալիալ
յեղէգըն հուպ ի ջուրն անկեալ իբրև զանարի
գերան երևէր՝ ահագին տեսողացն:

Յայնժամ եղև ծանախութիւն և սէր բարե-
պաշտին Եւսեբեայ և սրբոյն Թէովդորոսի որպէս
յիւրմէ ծնեալ որդի:

Բայց երանելին Թէովդորոս ոչ զազարէր ըզ-
հաւատակիցն իբր զհեծեալն ուսուցանել վասն
անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զի յայտ
նի որպէս զնայն կալցեն զհաւատս անպարտելի
մեալ ի հակառակացն ի յոյս բարեպաշտութեան ի
Քրիստոս Յիսուս ի Տէր մեր զորում փառք յաւի-
տեանս ամէն:

1. Ա. Առաջին շարաթ աւրն յիշատակ է սուրբ վկա-
յին Թէոդորոսի որ յաղունացքն տաննն ի Մովսէսի պատմու-
րէսէն, ծննդեանն և վարուց նորա: Բ. Առաջին շարաթու յի-
շատակ է սրբոյն Թէոդորոսի զօրավարին ծննդեան և սը-
նընդեանն և վարուցն նորա, ի Մովսէսի պատմութեան: 2. Ա.
Բազում ջիւրովք: Բ. բազում ջիւրաւք: 3. Ա. Նեքստեայ
Բ. Նեքստանբայ: 4. Բ. ի մէջ երկրային ի մէջ Գամբական:
5. Բն. հուէր: 6. ի մէջ քարաւերան: 7. Բն. իջեալ: 8. Բ.
ի Սկեռիոն: 9. Ա. ի դաշտային: 10. Բ. առ որ. (Յով. կաթ.)
11. Ա. Մարմտիտոն: 12. ի Պուտոս: 13. Ա. ի միջոյ քա-
րաւերանց: Բն. քարաւերանց: 14. Բն. կողմապետ: 15. Բն.
աններան իւրով: 16. Ա. Միծակ. Բ. ի Միծակ: 17. քաղա-
քի: 18. Բն. ի Հայք գրաւեաց: 19. Ա. տիեզերասամանեալ.
Բ. և տիեզերասամանակալ: 20. Ա. առ կատարով. Բ. առ
կատարովք: 21. Ա. քառակոնակին: 22. Ա. եւ նախ. Բ. նախ:
23. Ա. հատակից. Բ. հատակից. (տնս վիթ զօրա-Վիթ):
24. (Մարգ) Ծանապարս սանտիսանեալ: 25. Բն. տուն. (Մարգ)
տունս քարայրոս: 26. (Յով. Կաթ.) քրածոյս. (Մարգ) կոսածոյս:
27. Բ. ծեռակերտին: 28. ի յազնաթգեփայ. (Յով. Կաթ.)
Խազնաթ Գեփայ, իսազնաթգեփայ. (Մարգ.) և իսազնաթ-
կեփայս: 29. Բն. տիրացան. Բ. տիրեցին. (Մարգ.) տիրացաւ:
30. Ա. Պոպէի: 31. Որում: 32. Եինելով: 33. Ա. Պոպէուպա-
լիս: 34. Ա. Լիոն Պոնտոս, Բ. գէլիոն Պոնտոս: 35. Մե-
տրապալիտ: 36. Բն. յորոց: 37. Բն. շէք: 38. զիեզեմոս:
39. Բն. իջանելով: 40. Ա. ինդրն զայնտիկ. Բ. մի՛ խուզել:
41. Թէոդորոս: 42. Բեքստոնեայ: 43. Սորուք: 44. Բն. եւ
45. Բն. վարուց: 46. Բ. ի տիս: 47. Բն. իտրագունալք: 48. Ա.
ընդարմամբն համարեալ. Բ. ընդ արմամբն: 49. Ա. պն-
դութիւն ընդդիմութեանն ի հակառակութիւն բերելով. ին-
քեան. Բ. անդութիւն ընդ անդութեան բերել. . . ինքեանց:
50. Ա. պրաստին. Բ. պրաստին. (ըստ Վարդանի պրաստինս —

ՄՈՎՍԵՍԻ ԽՈՅՈՐԷՆՈՅԻՈՅ Ի ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒ-
ԹԵՆԻ:

(Տնս Մովս. Խոր. Բ. ձգ.)

Իսկ երանելոյն նունէի վրաց վարդապե-
տուհւոյ որ էր յընկերաց սրբոյն Հովսիփոսեայ) փա-
խրտեամբ հասեալ յաշխարհն վրաց՝ ի Մցլիթայ
քաղաք նոցա նախագահ, յոյժ ճգնութեամբ ստա-
ցեալ շնորհս բժշկութեան, որով զբազում անտա-
ժէտս բժշկեաց:

Նորա խնդրեալ արս հաւատարիմս յղեաց առ
սուրբն Պրիգորի թէ զի՛նչ հրամայեցէ նմա գործել
այնուհետև, քանզի յօժարութեամբ ընկալան յոյժ
զքարոզութիւն աւետարանին. և և հրաման անձե-
կործանել զկուռնն, որպէս և ինքն արար և զպա-
տուականն կանգնել զնշան խաչին, ցոր տալոյ նոցա
տեառն հովիւ յառաջնորդութիւն: Եւ իսկոյն կոր-
ծանեաց զամբրոպային պատկերն Արամաղդայ, որ
մեկուսի ի քաղաքէն՝ գետոյն հօրի ընդ մէջ անցա-
նելով, զոր սովոր էին երկիր պագտնել այգուն այ-
գուն ի տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոցա ե-
րևէր, Իսկ եթէ որ զոհն կամէր, անցեալ ընդ գե-
տըն առաջի մեհնին զոհէր, Բայց ի վերայ նորա
յարեան նախարարք քաղաքին, եթէ զո՞վ արգելք
փոխանակ կուոցն երկրպագեմք, Եւ ուսեալ եթէ
զնշան խաչին Քրիստոսի, զոր արարեալ կանգնեցին
ի վերայ վայելուչ բլրոյ յարեւելից կուսէ քաղաքին
մեկուսի, բաժանեալ և նա փորբազոյն գետով, և
երկիրպագեցին ընդ առաւօտն ամենայն բազմութիւ-
նըն, նոյնպէս ի տանեաց իւրաքանչիւր:

Բայց յորժամ ելին ի բլուրն տեսին փայտ կո-
փեալ ոչ ճարտարաց ինչ գործ, յորովք քան զսա-
կաւս, արհամարհեցին, որպէս թէ այնպիսեալ լի ի-
ցէ նոցա անտառն ամենայն և թողեալ ի բաց գը-
նացին:

Իսկ բարերարին Աստուծոյ նպեցեալ ի գայ-
թակղութիւնս նոցա առաքեաց սիւն ամպոյ յերկ-
նից և լցաւ լեռոն բուրմամբ անոյշահոտութեամբ և
ձայն բազմութեան սաղմոսերգողաց լսելի եղև քաղ-
ցըր յոյժ և ծագեաց լոյս տպաւորութեամբ ըստ
ձեոյ և ըստ չափոյ փայտեղենին և կալով ի վերայ
նորա հանդերձ երկոյտասան աստեղեօք, յոր ամե-
նեքեան երկրպագեալ և յայնձհետէ զօրութիւնք բը-
ժշկութեանց լինէին ի նմանէ ի փառս Քրիստոսի:

գիւղ) 31. Ա. Ախտոպ. Բ. Էլիսայիտայ: 32. Ա. շարժումն մեծ.
Բ. շարժումն ի թնդմանէ զղոմմամբ գալոյ: 33. Ա. քայլամբ:
34. Բ. շալմամբ: 35. Ա. իբրև զգեքան անձարին: Բ. իբրև
զգեքան արի: 36. Բ. զոյնս. Բն. զոյնս:
* Անշուշտ գրել սխալ է այս. իսկականը ի հարկէ
Վիթ պէտք է վնէր: